

“ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ”
Սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերություն

Կենցաղային էլեկտրատեխնիկական և
նաղիոտեխնիկական արտադրատեսակների
թափոնների օգտահանման

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման
հայտ

Կատարող՝
«Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն՝
Վ.Թևոսյան



Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	3
1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը	3
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	3
1.3. Իրավական հիմքերը	4
2. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՂ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ	5
2.1. Տեղադիրքը	5
2.2. Կլիմայական պայմանները	5
2.3. Օդային ավազան	8
2.4. Ջրային ռեսուրսները	8
2.5. Հողերի բնութագիրը	9
2.6. Կենսաբազմազանություն	9
2.6.1. Բուսական աշխարհ	9
2.6.2. Կենդանական աշխարհ	10
2.6.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ	10
2.7. Ելակետային սոցիալ-տնտեսական ցուցանիշները	11
3. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	11
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	12
4.1. Հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը	12
4.2. Նախատեսված մեղմացնող միջոցառումները	13
4.3. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	13
4.4. Փոխհատուցում	14
Իրադրային սխեմա	15

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

Ձեռնարկողի անվանումը՝

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

Ձեռնարկողի հասցեն՝

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 4/1

Սպասարկման կենտրոնի հասցե՝ ՀՀ, Երևան, Սեբաստիայի փողոց 141/8 շենք (Մալաթիա-Սեբաստիա վարչ. շրջան):

Ձեռնարկողի գործունեության վայրը՝

Վեգա խանութների ցանցը գործում է ՀՀ ամբողջ տարածքում:

Գործունեության ոլորտը՝

- Մանրածախ և ապառիկ վաճառք. աուդիո-, վիդեո- և կենցաղային տեխնիկա և էլեկտրոնիկա, բջջային հեռախոսներ, համակարգչային տեխնիկա և աքսեսուարներ, շինարարական գործիքներ, լուսային սարքեր, կահույք, մանվածքեղեն, գորգեր, սպասք, խոհանոցային պարագաներ, խաղալիքներ, պատի ժամացույցներ, գրենական պիտույքներ և այլն:

- Կահույքի արտադրություն

- Մանվածքեղենի արտադրություն

- Տրանսպորտային ծառայություններ և լոգիստիկա

- Կենցաղային տեխնիկայի և էլեկտրոնիկայի վերանորոգում և երաշխիքային սպասարկում

- Ծանր ավտոտրանսպորտային միջոցների սպասարկում:

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

➤ Նախատեսվող գործունեության անվանումը՝

Կենցաղային էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական արտադրատեսակների թափոնների հավաքում, օգտահանում և ժամանակավոր պահեստավորում:

➤ Գործունեության նպատակը՝

Բնակչությունից և կազմակերպություններից ընդունել բանեցված էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական սարքեր և սարքավորումներ, տեսակավորել դրանք՝ մի մասը վաճառել որպես երկրորդային հույս, իսկ մնացածը ժամանակավոր պահեստավորել հետագա օգտահանման կամ վնասագերծման նպատակով:

Գործունեությունն ունի նաև զգալի բնապահպանական արդյունք, քանի որ թույլ կտա կանխել շրջակա միջավայրի հնարավոր աղտոտումը մետաղներով և այլ վտանգավոր նյութերով:

1.3. Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),
8. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
9. <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 30.06.2003թ-ի N 121-Ն որոշում:

Նախատեսվող գործունեության պլանավորման և հետագա իրականացման բոլոր փուլերում առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու թափոնների գործածության գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ, <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենքով, ինչպես նաև <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված պահանջներին:

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը դասվում է <<Ա>> կատեգորիայի գործունեության տեսակներին և ենթակա է փորձաքննություն՝ երկու փուլով:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՂ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Տեղադիրքը

Մասիս քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ավազանում: Հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ, Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Սայաթ Նովա, հարավից՝ Նորամարգ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրիս գյուղերին:

Քաղաքի միջին բարձրությունն ծ.մ.-ից կազմում է 854 մ, մակերեսը՝ 5.7 կմ²:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Սեյսմիկ բնութագրերը

Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»- ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ տարածքը գտնվում է սեյսմիկ երրորդ գոտում: Գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են $A = 0.4g$ և ունի 9 և ավելի բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

2.2. Կլիմայական պայմանները

Տվյալները բերված են ըստ ՀՀՇՆ II-7-01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի: Բնութագրվող տարածքին, քանի որ գտնվում է Արտաշատ քաղաքում, բնորոշ են «Տաք» կլիմայական ցուցանիշները: Մասիս քաղաքին բնութագրական են շոգ և չորային ամառները: Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 854 մետր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ գտնվող կայանը Արտաշատի օդերևութաբանական կայանն է, այդ իսկ պատճառով դիտարկվել և օգտագործվել են Արտաշատի օդերևութաբանական կայանի տվյալները, որի դիտարկումների արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակների տեսքով:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C0												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արտաշատ	829	-3.6	-0.9	5.6	12.7	17.5	21.5	25.3	24.8	19.8	13.0	6.0	-0.6	11.8	- 29	43

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		ամենացուրտ ամիս	ամենատաք ամիս
Արտաշատ	829	78	73	63	58	59	54	51	52	57	68	73	79	64	64	32

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Օդերևութաբանական կայան	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Ձնածածկույթ, մմ			
	Ըստ ամիսների												տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը (սմ)	Տարվա ձնածածկույթի օրերը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				
Արտաշատ	18	18	27	36	40	25	11	6	10	22	24	17	254	40	36	46
	18	20	32	36	43	34	27	22	28	36	31	25	43			

Աղյուսակ 2.4. Քանու պարամետրերը

1	2	3	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								12	13	14	15	20 50 100		
			4	5	6	7	8	9	10	11					16	17	18
Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)	Անհողմությունների կոնկրետություն %	Միջին ամսական արագություն մ/վ	Միջին տարեկան արագություն մ/վ	Ուժեղ քամիներով (Մ. 15մ/վ) օտեռե ռամակո	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "ն" տարիների		
Արտաշատ	920.2	Հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0.3	0.4	7	21	24	26
			1.7	1.7	2.7	3.1	2.4	2.0	2.2	1.7							
		Ապրիլ	4	9	12	27	13	8	13	14	74	0.6					
			1.7	1.8	2.1	2.8	2.5	2.8	2.8	2.6							
		Հուլիս	8	7	9	16	9	9	18	24	80	0.4					
			1.7	1.9	1.7	2.0	2.0	2.0	2.7	2.3							
		Հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	85	0.3					
			1.6	1.5	2.1	2.0	1.5	2.1	2.4	2							

2.3. Օդային ավազան

Մասիս քաղաքի օդային ավազանի աղտոտվածությունը ձևավորվում է ավտոտրանսպորտային միջոցների, բնակչության կենսագործունեության և սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների ազդեցության արդյունքում:

Մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը հանրապետության տարածքում վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից: Սակայն, Մասիս քաղաքում չկան ՊՈԱԿ-ի դիտակետեր և բնակավայրի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները որոշվում են հաշվարկային եղանակով՝ ըստ բնակչության թվաքանակի:

Համաձայն ՊՈԱԿ-ի հաշվարկային տվյալների, Մասիս քաղաքի օդային ավազանում ֆոնային աղտոտվածությունը կազմել է՝

- ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³,
- ազոտի երկօքսիդ՝ 0.015 մգ/մ³,
- ծծմբային անհիդրիդ՝ 0.05 մգ/մ³,
- անօրգանական փոշի՝ 0.3 մգ/մ³:

2.4. Ջրային ռեսուրսները

Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Արաքս գետն է:

Արաքսը հանրապետության խոշորագույն գետն է: Անդրսահմանային գետ է, որի ավազանն ընդգրկում է Թուրքիայի, Հայաստանի, Իրանի և Ադրբեջանի տարածքը:

Ունի 1072 կմ երկարություն¹, որից 200 կմ կազմում է Հայաստանի և Թուրքիայի սահմանը: Հայաստանի գետերի մեծագույն մասը (որոնց ավազանները, միայն վերցված, կազմում են հանրապետության տարածքի 73.5 տոկոսը) պատկանում է Արաքսի ավազանին: Արաքսը վաղնջական ժամանակներից հանդիսացել է հայոց քաղաքակրթության կարևոր բնօրրաններից մեկը:

Արաքսի սնումը խառն է, հորդացումը՝ մարտից հունիս, առավելագույնը՝ մայիսին: Առաջին հորդացումը՝ մարտ–ապրիլ, կապված է ցածրադիր վայրերի ձնհալքի և գարնանային անձրևների հետ, երկրորդը (ավելի բուռն)՝ մայիս–հունիս, լեռների ձնհալքի հետ: Ամենացածր մակարդակները լինում են հուլիս–օգոստոսին և ձմռանը: Երրորդ թույլ հորդացումը աշնանային անձրևներից է: Հորդացման ժամանակ Արաքսը մեծ ավերածություններ է առաջացնում, հատկապես Արարատյան, Միլի ու Մուղանի դաշտերում: Հորդացումների ժամանակ Արաքսը միջին և ստորին հոսանքներում հաճախակի փոխում է իր հունը՝ միշտ շարժվելով դեպի հարավ:

¹ <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%A1%D6%84%D5%BD>

Ներկայացվող տարածքից մինչև Արաքսի մոտակա հատվածը հեռավորությունը կազմում է 7.9կմ:

2.5. Հողերի բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքին հիմնականում բնորոշ են բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ ցեմենտացած հողային տիպեր: Առանձին տեղամասերում հողերը ներկայացված են նաև դարչնագույն հողերի կրազերծված ենթատիպով:

Անմիջապես ներկայացվող տարածքում բաց հողային մակերես կամ բուսաշերտ պարունակող մասեր չկան:

2.6. Կենսաբազմազանություն

Մասիս քաղաքի և դրա մերձավոր տարածքների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Բուսական աշխարհը սերտ կապված է բնակլիմայական, մորֆոլոգիական, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները: Համաձայն Ս. Դալի կենդանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու աղոտ, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելաձևի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակատեղերի առատություն):

2.6.1. Բուսական աշխարհ

Բուսական աշխարհը ներկայացված է Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկա- տարազգի ներկայացուցիչները:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, տնտեսական գործունեություն և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը:

Արարատի մարզում բուսականությունը կիսաանապատային է և անապատային:

Կիսաանապատայինից առկա են բնական բուսածածկի հետևյալ տիպերը՝ Օշինդրա-Էֆեմերային, մասնակցությամբ՝ *Artemisia fragrans* Willd., *Kochia prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. Et Ikonn., *Atraphaxis spinosa* L.,

Rhamnus pallasii Fisch. et Mey., Tanacetum argyrophyllum (C. Koch) Tzvel., Poa bulbosa L. Bromus, Aegilops, Eremopyrum, Alyssum. Aeloropus littoralis (Gouan) Parl.

Անապատայինից առկա են բնական բուսածածկի հետևյալ տիպերը՝ Հալոֆիլ, մասնակցությամբ՝ Salsola ericoides Bieb., S. Dendroides Pall., S. Nitraria Pall., Halocnemum strobilaceum (Pall.) Bieb.

Դեղաբույսերից տարածված են՝ Տուղտ Դեղատու, Տուղտ հայկական (Althaea officinalis, A. armeniaca), Իշավարունգ սովորական (Ecballium elaterium), Տորոն ներկատու (Rubia tinctorum), Սպանդ սովորական (Peganum harmala), Փշատենի նեղատերև (Elacagnus angustifolia), Ալոճենի մուգ արնագույն և այլ տեսակներ (Crataegus atrosanguinea):

Հազվադեպ և անհետացող բուսատեսակներից են՝ Գագ տարօրինակը (Astragalus paradoxus), Կղմուխ Օշեի (Inula aucherana):

Անմիջապես ներկայացվող տարածքը գտնվում է Մասիս քաղաքի արտադրական գոտում, որտեղ չկա բնական բուսածածկ:

2.6.2. Կենդանական աշխարհ

Ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են՝ շնագայլ, եղեգնակատու, վայրի խոզ, գյուրգա, ջրասամույր, միջերկրածովյան կրիա, ճահճակուղբ, կաքավ, նապաստակ, խեցգետին, մշկամուկ, անողնաշարավորներից՝ անատամ:

Հազվադեպ և անհետացող կենդանատեսակներից են՝ Սովորական երկարատև չղջիկ (Miniopterus schreibersi Kuhl), ծական (Sabanejewia aurata De Filippi):

2.6.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տարածաշրջանի բնական էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումը ապահովելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում շրջակա տարածքներում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ.

«Խոսրովի անտառ» պետական արգելոցը,

«Խոր Վիրապ» պետական արգելավայրը:

Նշված պահպանվող տարածքները բավականաչափ հեռու են նախատեսվող աշխատանքների իրականացման վայրերից և չեն կրի որևէ ազդեցություն այդ աշխատանքների իրականացման արդյունքում:

Անմիջապես ներկայացվող տարածքը գտնվում է Մասիս քաղաքի արտադրական գոտում, որտեղ չկան վայրի կենդանիների ապրելավայրեր, ինչպես նաև մակերևութային ջրային ռեսուրսներ:

2.7. Ելակետային սոցիալ-տնտեսական ցուցանիշները

Մասիս քաղաքային համայնքը գտնվում է ՀՀ Արարատի մարզում, Հրազդան գետի ձախ ափին, Երևանից 14 կմ հարավ, իսկ մարզկենտրոն Արտաշատից՝ 20 կմ արևմուտք հեռավորության վրա:

Համայնքը հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ, Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Սայաթ-Նովա, հարավից՝ Նորամարդ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրիս գյուղերին:

Մասիսում տեղակայված է Երևանը սպասարկող խոշոր երկաթուղային հանգույց:

Ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների² 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Մասիսի մշտական բնակչությունը կազմում է 20667 մարդ:

Մասիս քաղաքի արդյունաբերական գոտում՝ երկաթուղու կայարանի մրաձակայքում, գործում են մի շարք արդյունաբերական կազմակերպություններ, պահեստներ և բազաներ:

3. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վեգա խանութների ցանցը մանրածախ և ապառիկ եղանակով իրականացվում է վաճառք. աուդիո-, վիդեո- և կենցաղային տեխնիկա և էլեկտրոնիկա, բջջային հեռախոսներ, համակարգչային տեխնիկա և արքեսուարներ, շինարարական գործիքներ, լուսային սարքեր, կահույք, մանվածքեղեն, գորգեր, սպասք, խոհանոցային պարագաներ, խաղալիքներ, պատի ժամացույցներ, գրենական պիտույքներ և այլն: Այս բոլորը ապրանքատեսակները ժամանակի ընթացքում կորցնում են իրենց սպառողական հատկությունները և մեծամասամբ վերածվում են թափոնի: Ընդ որում դրանք կարող են պարունակել վտանգավոր նյութեր: Ուստի խիստ անհրաժեշտ է կանխել այդ վտանգավոր նյութերի տարածումը կենցաղում կամ շրջակա միջավայրում:

Վեգա Ուորլդ ընկերությունը նախատեսում է իր Մասիս քաղաքի արտադրական տարածքում կազմակերպել նշված ապրանքատեսակների թափոնների ընդունում և պահեստավորում: Տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի արդյունաբերական հագույց 28 հասցեում:

Տարածքը երեք կողմից շրջապատված է արտադրական կազմակերպություններով, արևմտյան կողմից գտնվում են Սայաթ-Նովա գյուղի առանձնատները: Հեռավորությունը մոտակա առանձնատնից կազմում է 180 մ: Նախատեսվող շինությունը ներկայում չի

² https://www.armstat.am/file/Map/MARZ_03.pdf

օգտագործվում: Այստեղ նախատեսվում է իրականացնել վերանորոգման աշխատանքներ:

Թափոնները կշոկվելու են տարածքում առկա կշեռքի միջոցով և տեղադրվելու արտադրական մասնաշենքի պահեստային մասում: Սպասարկող անձնակազմը տեսակավորում է թափոնները հետևյալ ընթացքով.

- Մետաղական մասերը կտրատվում են, առանձնացվում և տեղափոխվում մետաղական ջարդոնի պահեստ, որտեղից առաքվում /վաճառվում/ են համապատասխան լիցենզիա ունեցող ընկերություններին:

Նախատեսվում է պահեստի մոտ՝ ծածկի տակ տեղադրել կտրատող սարքեր և մամլիչ: Սարքերի տեսակները և մակնիշը կորոշվի նախագծման փուլում:

- Պլաստիկ նյութերը հանվում են, տեսակավորվում և ըստ տեսակների ուղարկվում մամլիչ տեղամաս, որտեղ բրիկետավորվում և տեղափոխվում են պլաստիկ նյութերի պահեստ, որտեղից առաքվում են համապատասխան լիցենզիա ունեցող ընկերություններին

- Փայտյա իրերը հանվում, կտրատվում և տեղափոխվում են համապատասխան պահեստ, որտեղից առաքվում են փայտամշակման արհեստանոցներ

- Թղթյա և ստվարաթղթյա թափոնները տեղափոխվում են թղթի պահեստ, որտեղից առաքվում /վաճառվում/ են համապատասխան լիցենզիա ունեցող ընկերություններին

- Կենցաղային փոքր մարտկոցները (батарейки) հավաքվում են հատուկ պահեստում, որտեղ պահվելու են մինչ հանրապետությունում ստեղծվեն հատուկ պոլիգոններ կամ ներդրվեն մարտկոցների վերամշակման տեխնոլոգիաներ:

Ընդամենը նախատեսվում ամսական ընդունել մինչև 1000 հատ խոշոր չափերի բանեցված սարք, այդ թվում՝ սառնարաններ, հեռուցստացույցեր, լվացքի մեքենաներ, փոշեկուլներ և այլն:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

4.1. Հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը

Նախատեսվող գործունեության հիմնական ռիսկերը կապված են մետաղական և պլաստիկ մասերի հետ աշխատելու անհրաժեշտության, ինչպես նաև կենցաղային մարտկոցներում պարունակվող քիմիական նյութերի հետ:

4.2. Նախատեսված մեղմացնող միջոցառումները

Նախատեսվող գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա բացառելու և նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մետաղի և պլաստիկ նյութերի կտրատումը իրականացնել մեխանիզացված եղանակով, բացառելու համար վնասվածքները
- Բանեցրած մարտկոցները պահեստավորել հատուկ հատկացված պահեստային տարածքներում
- Պահեստները պետք է լինեն փակ շինություններում, ունենան բետոնապատ հատակներ և կահավորված լինեն օդափոխության համակարգերով
- Արտադրական տարածքը պետք է ունենա հակահրդեհային համակարգ
- Պարբերաբար նախատեսվում է իրականացնել բանվորական միջավայրի, դեֆլեկտորների և մարտկոցների կուտակման հանգույցի մոնիթորինգ
- Սպասարկող անձնակազմը անցնելու է նախնական և պարբերական հրահանգավորում
- Գնված թափոնները պետք է տեղափոխվեն փակ թափքով տրանսպորտային միջոցներով:

4.3. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Բնառեսուրսներից նախատեսվում է օգտագործել միայն ջուր՝ սպասարկող անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Այս ուղղությամբ մանրամասն տեղեկատվությունը կներկայացվի ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

Նախատեսվող գործունեության համար չեն օգտագործվելու նոր հողատարածքներ, բուսական և կենդանական աշխարհին վտանգ չի սպառնալու: Նախատեսված են նաև հարակից տարածքների բարեկարգում և կանաչապատում:


Բոլոր տեսակի հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև դրանց մեղմացման միջոցառումները և մոնիթորինգային գործողությունները կներկայացվեն համապատասխանաբար բնապահպանական և սոցիալական կառավարման, ինչպես նաև մոնիթորինգի պլաններում, որոնք կմշակվեն լիազոր մարմնի կողմից տրամադրվելիք

տեխնիկական առաջադրանքի հիման վրա և մաս կկազմեն ՇՄԱԳ հաշվետվության:

4.4. Փոխհատուցում

Ներկայացվող գործունեությունը ինքնին հանդիսանում է լուրջ բնապահպանական ծրագիր, որը նպատակաուղղված է շրջակա միջավայրի պահպանությանը տարբեր տեսակի թափոնների ազդեցությունից:

Նաև տեղական ազդեցությունները նվազագույնի հասցնելու նպատակով կմշակվեն մանրամասն բնապահպանական և սոցիալական միջոցառումներ, որոնց ծախսերը նույնպես հանդիսանում է փոխհատուցում:



Իրադրային սխեմա



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «15» Հունվարի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏԼՎԵԼՈՒ ԿԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Մասիս ք. Արդյունաբերական հանգույց Սայաթ-Նովայի փողոց 28

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ 19.12.2018թ. - գրանցամատյան 5124

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹՎԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 03-003-0443-0017

Մակերեսի չափը (հա)՝ 2.56

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ Արտադրական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	03-003-0443-0017-001	Վարչական շենք	664.58 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
2	03-003-0443-0017-002	Պահակատուն	13.5 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
3	03-003-0443-0017-003	Հավաքման արտադրամաս	3806.91 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
4	03-003-0443-0017-004	Պահեստ	526.71 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
5	03-003-0443-0017-005	Պարբևոց	64.4 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
6	03-003-0443-0017-006	Պահեստներ	704.28 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
7	03-003-0443-0017-007	Ավտոլվացման կետ	207.37 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
8	03-003-0443-0017-008	Ավտոտնակ	66.42 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
9	03-003-0443-0017-009	Լիցքավորման կետ	12.5 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
10	03-003-0443-0017-010	Արվեստանոց	156.8 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
11	03-003-0443-0017-013	Չուգարան	10.32 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
12	03-003-0443-0017-015	պարիսպ	54.67 ք.մ., 98.4 խ.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
13	03-003-0443-0017-011	ծածկ	203.9 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
14	03-003-0443-0017-012	հարթակ	2244 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
15	03-003-0443-0017-014	ծածկ	297.3 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության պայմանագիրը կնքվել է անորոշ ժամկետով՝ յուրաքանչյուր ամիս 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ վարձավճարով:



Վարձակալության պայմանագրի կնքման համար հարկազանցվող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Կարինե Հովհաննիսյան
 և անշարժ գույքի գրանցման նիսանական ստորաբաժանման անշարժ

Վկայական N 15012019-03-0024, գաղտնաբառ՝ 8CCKVW4KYSMA



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2020-09-25

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 286.110.06791

Հիմնադրման տարի 2008

Գրանցման ամսաթիվ 2008-02-22

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 39273582

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 02704414

Սոցիալական վճարների պարտավորությունների
անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի
ծածկագիր) 43116791

Էլ. փոստ -

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե ԹՈՒՄԱՆՅԱՆ Փ. / 4 / 1 ԿԵՆՏՐՈՆ 0001 ԵՐԵՎԱՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս -

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն Տնօրեն

Անուն Ազգանուն ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՐԻՆԵ ՆՈՐԱՅՐԻ

Անձնագրային տվյալներ AM0244781

Հասցե ԵՐՁՆԿՅԱՆ / 4 / 26 ք.Երևան 0033 ՀԱՅԱՍՏԱՆ

Էջ 2

ՊԵՏԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԱԿՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՍՏՆՈՒՑ ՔԱՂՎԱՆԻՑ 2020-09-25
«ՎԵՐԱ ՈՒՐԸՂԳ»
Ստեփանավանի պատմական առվարությանը ընկերություն (ՍՊԸ)

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) գրառված չեն

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ 4500100000

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով
ՄԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐԻ Անձնագիր h/h AM0244781 տրվ. 004 ի կողմից Հասցե՝ ԵՐԶՆԿՅԱՆ Փ. / 42 / 26 քն. ԱՐԱՔԿԻՐ 0014 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2008-02-22	27.77827159396 %	1250049999.999794
ՅՈՒՐԻ ԱՖՐԻԿՅԱՆ ԱՄԱՍԻԱՅԻ Անձնագիր h/h AM0300776 տրվ. 008 ի կողմից Հասցե՝ ԲԱՖՖՈՒ Փ. / Շ / 55 / 39 ՄԱԼԱԹԻԱՍԵՐԱՍՏԻԱ 0064 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2016-06-01	72.22172840604 %	3250050000.0002065


Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2008-02-22	Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն
2008-08-26	Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն
2011-04-18	Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն) Մասնակիցների փոփոխություն մասնակիցների գրանցամատյանում Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն) Մասնակիցների տվյալների փոփոխություն Մասնակիցների տվյալների փոփոխություն Մասնակիցների փոփոխություն մասնակիցների գրանցամատյանում Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն
2012-04-23	Կանոնադրության թվայնացում
2013-11-05	Տվյալների ուղղում տվյալների շտեմարանում
2016-03-04	Կանոնադրական կապիտալի փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)
2016-06-01	Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն) Կանոնադրական կապիտալի փոփոխություն Մասնակիցների փոփոխություն
2016-12-15	Կանոնադրական կապիտալի փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)



2020-07-09	Կանոնադրական կապիտալի փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)
2020-09-25	Կանոնադրական կապիտալի փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)

Քաղվածքը տրամադրող՝


Անի Լազարյան
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝

